ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
05.02.2018Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 12 անդամները:

Բացակայում են՝ Ն.Բաբայանը, Տ.Եփրեմյանը և Հ.Գրիգորյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյանը, աշխատակազմի քարտուղար Շ.Սարգսյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը,Պ.Գաբրելյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 75 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 76 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 89-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Պ. Գաբրելյան/

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով ֆինանսատնտեսագիտական և գնումների կազմակերպման բաժնի պետի ժ/պ Պավել Գաբրելյանի 2018 թվականի հունվարի 31-ի զեկուցագիրը՝ ***առաջարկում եմ*** պետական բյուջեից ազգային նվագարանների գծով տրվող սուբվենցիաների հաշվարկման և համայնքի բյուջեի սեփական եկամուտների հետ կապված կատարել համապատասխան փոփոխություններ.

Համայնքի ղեկավար . Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2.Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 75 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով.**առաջարկում եմ**. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի «Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը եվ պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 75 որոշման հավելվածը լրացնել 64 տողով:

«

64	Հարկահավաք		Տեխնիկական սպասարկման		10	90000	0	0	900000

»

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. Չարենցավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 75 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկ. Շ. Սարգսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով ***«Մաքուր Չարենցավան»*** համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Վ.Աբրահամյանի գրությունը ***առաջարկում եմ*** «Չարենցավան համայնքի ***«Մաքուր Չարենցավան»*** համայնքային ոչ առևտրային կազմակերպության 2018 թվականի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 76 որոշման 11-րդ հավելվածի 16-րդ տողը շարադրել նոր խմբագրությամբ :

«

16	*Բանվոր*		*Տեխնիկական սպասարկման*		*5*	*85000*	*0*	*0*	*425000*

»

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 12 **դեմ - 0** **ձեռնպահ -0**

Բաբայան Վալերի
Գասպարյան Անատոլի
Գասպարյան Մելիք
Դավթյան Կարեն
Երիցյան Գագիկ
Խլղաթյան Արսեն
Վարդանյան Նորայր
Վարդանյան Նորիկ
Վարդանյան Սարգիս
Պողոսյան Մնացական
Փանոսյան Արթուր
Սահակյան Երեմ

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Նիստն արձանագրեց Շ. Սարգսյանը _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**